

Յայտարարութիւնների համար վերադառնալ են
 իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Վենն մի քարեխիղճ մարդ, նոյնպէս և «Մը-սակի» ընթերցողները կարող են վիպիկ ուսումնարանների հանգստութեան կողմից, թէ որ թիմի ուսումնալսողները վայելում են անհնից ատ խաղաղութիւն: Կարող ենք աստատել ի վիճակութիւններ Շուշու, Բագու, Նոր-Նախիջևանի և այլն և այլն, քաղաքներ ուսումնարաններում: Իսկ Փիֆիլի թեմային վերանայնա-թեանը յիշման աղբիւրն է խռովութիւն է տիրապետում: Սրանով են չեմ կամենում բողոքողին մերել թէ տարածայնութիւններ կամ անբաւարարութիւններ ծագած չը լինեն երբեմնապէս այն ամ այն դպրոցում, բայց այդ տեսակ երեւոյթ-եր որտեղ չեն պատահում: Ենեղութեանից իրայն կարող էք սպասել բողոքողին հանգստե-րում: Կայնա՞նք անշարժութիւն, իսկ որտեղ եմք, այսինքն անշարժութիւն, անհաւաքա-րութիւն կարծիքների և այլն: Պարծենալով կա-ող եմ ասել, որ ինչ տեղ այդ տեսակ տարա-այնութիւն ծագել է, ես միշտ շտապել եմ ասնել իր ժամանակին այնտեղ, չը հապելով մեն տեսակ վտանգներին, և իմ արխատութիւ-րիս հանգստացրել և հաշտեցրել ուսումնարա-նայն գործող անձանցը, ասածներս վկայ արող են ինչի տեղի վրայ: Երազութեան մէջ չատնցած յոյս տեսած նամակներ և նոյն իսկ

ամեն մի տեղի հասարակութիւնը և հոգաբարձութիւնը:

3) Պ. Մ. Մ. Մ. գրում է՝ իբր թէ ես անկանոն եմ վարվում ուսումնարանների անտեսական հաշիւներում: — Ամենին յայտնի է, որ ուսումնարանների անտեսական մասը կառավարում են անմիջապէս հոգաբարձութիւնները կամ խնամակալ անձինքը, իսկ թեմական վերատեսուչը պահանջում է հոգաբարձութիւններից տարէնը մի անգամ հաշիւ և գնում է մատենաները՝ երբ կամենայ: — Եւ ինձ երբէք թոյլ չեմ տուել անտեսական հաշիւների մէջ խառնվել, բացի խորհուրդներ տալուց և հարկաւոր նկատողութիւններ անելուց երեկոց անկանոնութիւնների մասին, բայց մի որ և իցէ բան անել ուրիշ կերպ տնտեսական մասում ոչ ժամանակ կայ և ոչ էլ կարողութիւն առանց դորան ծանրաբեռնեալ թեմական վերատեսուչին: Այդպէս էլ դասական պիտոյքներ բաժանելու պարտաւորութիւնը դրած է հոգաբարձութեանց վրա: Բացառութիւն կազմել է թիֆլիսը, իմ նախորդս թիֆլիսի մի քանի ուսումնարանների աշակերտներից ինքն էր ժողովում դասական պետքերի համար վարձը, աւելում էր այդ պիտոյքը և բաժանում աշակերտներին, իսկ ես այդ աշխատութիւնը՝ այսինքն աշակերտներից փողեր հաւաքելը և դրանցով դասական պիտոյք գնելը ու բաժանելը յանձնեցի (?) ամեն մի դպրոցի իր վարչութեան, որը կարող են վկայել նոյն իսկ այդ վարչութիւնները: Իսկ ինձ վրա թողեցի միայն մի դպրոցներ, որպէս զի կարողանում անմիջապէս տեղեկանալ թէ՛ արդե՞ք որքան է դրանում աղ պէտքերի համար և կարելի է մի բան ևս օգուտ զգործել թողնել: Կը վկայեն այդ վարչոցի բոլոր ուսուցիչները թէ ինչ առատութեամբ, անխնայ բաժանվել են ամբողջ տարվայ ընթացքում գրքեր, թուղթ, քարտախտակներ, քարտեզներ, թանաք, թանաքամաններ, քանոններ, գրահատներ և այլն և այլն: Բաժանած քարտախտակները, քարտեզները, մատիտները յայտնի ֆաբրիկին էին, գրահատները ջալիկայովին էին և այլն և այլն, և այդ ամեն պիտոյքները հաղթաբեռնութիւններից յետոյ այս տարի մնացին աշակերտներին ձեռքը:

4) Պ. Մ. Մ. պնդում է, որ ես ազգականներին համար հաշիւներ եմ հասկացող ուսուցիչներին և քիչ է մնում, որ թեմայի բոլոր ուսուցիչներին ինձ ազգականներ չինէ: Իմ փեսան, որի վրա յարձակվում է պ. Մ. Մ., նշանակված է ուսուցիչ, նոյն Ս. Գեորգի եկեղեցու դպրոցներում նախկին թեմական վերատեսուչը 1874 թվականից: Նրա ուսուցչական ընդունակութեան և դիրան բարեխիղճ կատարելութեան համար կը վկայեն բարձր սրբազան թեմական առաջնորդը, նախկին թեմական վերատեսուչը, Գորտու ուսումնարանաց հոգաբարձութիւնը Ս. Գեորգի եկեղեցու դպրոցաց հոգաբարձութիւնը և շատ պատուաւոր և հասկացող անձինք, որոնք ներկայ են եղել նրա աշակերտաց հարցաքննութեանցը: — Եւ աւելորդ ուժիկ կը բերէ չէ, ստացել, նրա ստացած ուժիկը ուսուցչութեան, և վերակացութեան համար է եղած պնդւմ և պնդան, ինչպէս, որ ստանում էին և ստանում են «թանդոյեանի», «կոմիտեանի» և ուրիշ մի քանի դպրոցների պէտք ուսուցիչները, որոնք կատարում են վերակացութեան պաշտոնը, ամբողջ օրը մնալով դպրոցի մէջ, մատակարար կարգին պահելով և ուրիշ ուսումնարանական պարտաւորութիւններ կատարելով, որոնցից ազատ են միայն ուսուցիչները: — Ինչ վերաբերում է փեսայիս ուսուցչին գիտնալուն որ չը գիտնալուն և նոյնպէս գաս տալուն, հարկաւոր է ասել, որ նա դուրս է եկել Գորտու արքունական գաւառական դպրոցի երրորդ դասարանից, աւարտել է Ներսիսեան դպրոցում, ուսուցչէն խօսում է, գրում և կարդում այնքան, որ չտեսնուի կը լինէր ունենալ մեր դպրոցների համար մի քանի այդպիսի ուսուցիչներ (2) առաջաց լեզուի համար: Չը նայելով դորան ևս, նա ուսուցաց լեզուի դասատուութեամբ չէ պարագլուխ իսկ Հաւաքարի Մարիամեան դպրոցի պարիսն դասատուում նա միայն այս տարի սարկը և մայիս ամիսներին պարապել է ուսուցաց լեզուով, այդ աւարակայի համար մի ուրիշ ուսուցիչ այդպիսի անյարմար ժամանակին չը գտնուելու պատճառով: — Եւ ինչպէս է, ինչ կը վերաբերի նրա իմ աղիւստան լինելուն, ինչու է նախանձվում պ. Մ. Մ., կարող է ինքն ևս մէկի աղիւստան լինել: Եթէ մեզ բան է դա:

5) Ս. Գեորգի եկեղեցու վարժուհին ևս վատ է երևում պ. Մ. Մ.-ին և խեղճին է մեղադրում օրիորդաց դպրոցի իբր փակվելուն: Այդ վարժուհին ուսումը աւարտել է Մարիամեան օրիոր-

դաց դպրոցում (Նորաշէնի), ամենահամեստ և բարոյական մի օրիորդ և արի իր գործին: Միանգամայն ստույթիւն է և զրպարտութիւն, իբր նա երեսնաց ծնեում է: Առաջարկում եմ պ. Մ. Մ.-ին եթէ դրա նմաններ մի քանի հատ կը գտնէ, որովհետեւ ուսումնարանների համար վարժուհիների մեծ կարօտութիւն ունենք, մեծ օրակութեամբ և շնորհակալութեամբ կընդունենք, թող միտքը բերէ պ. Մ. Մ. դրանից առաջ եղած թաւածող վարժուհուն, որին ես պաշտօնս մոռնելուն պէս արձակեցի աշարմարութեան պատճառով և այն ժամանակ ամաչէ: Ասածներիցս պարզ երևում է որ արդի վարժուհին չէր կարող պատճառ լինել դպրոցի փակման: — Աշակերտութիւնների թիւը ինչպէս առաջ, այնպէս էլ այս տարի եղել է 30—35: Նոյնիւս բեր ամսին 1877 թ., երբ բացվեցաւ Օնանեան օրիորդաց դպրոցը, ուր ձրի ընդունում էին աշակերտութիւններ և մի և նայն ժամանակ զգեստներ տալի, Ս. Գեորգի դպրոցից ևս խեղճ աշակերտութիւնների շատերը — մօտ 15 (?) հողի մօտն այնտեղ, թէպէտ և տարվայ կիսում նորամուտ խնդրող աշակերտութիւններ եղան, բայց այդպիսիք չընդունվեցան, որովհետեւ ուսումնարանական կանոնով տարվայ կիսից անկարելի է և միանգամայն վնասակար դասատուութեան համար նոր կարգով — գրել չիմացող աշակերտներ ընդունել, որոնք խանգարում են ուսման ընթացքին: Այսպէս ուրեմն օրիորդաց ուսումնարան էլ փակվել և թող ապագայութեան լինի այդ դպրոցի աշակերտութիւնների ընտելութիւնները, որոնք եղան այս տարի բարձր սրբազան թեմական առաջնորդի ներկայութեամբ և որոնցից յետոյ արձակվեցան ամառվայ արձակուրդին:

6) Ջիգրաշէնի դպրոցների կրօնուսուցչը դեռ իմ նախորդիցը շատ առաջ, նոյնպէս նրա ժամանակը ուսուցիչ է եղել այդտեղ: Նա այն տեսակ է դաս տալի, ինչպէս և մեր միւս քահանայքը, իսկ եթէ մի քանի դասեր է թողել, դրա համար այդ դպրոցի վարչութիւնը ուժիկից հանել է և բացի դրանից դասեր թողնում են թիֆլիսի և շատ տեղերի համարեալ բոլոր կրօնուսուցչը քահանայքը օրինակատարութեանց պատճառով: — Ինչ կը վերաբերի այդ քահանայի վարձակութեան ինձ համար, դրա մասին պ. Մ. Մ. շատ սխալվում է, ես ոչ ոքի բարեխօսութեան ոչինչ կարօտութիւն չունեմ, ես ճանաչում եմ միայն իմ անմիջական իշխանաւորին — բարձր սրբազան թեմական առաջնորդին, նրանից ընտրվում է, նրան անմիջապէս ստորադրվում են և նրան իր գործողութեանց հաշիւը տալի թեմական վերատեսուչը *): Եւ կարծես չեմ օտարները պաշտպանութեանը, այդ միջոցներին գիտնում են դանազան Մարտիրոսներ, Մկրտիչներ, Մարկոսներ, Պողոսներ և դրանց նման ազգի ջնչին անդամները (?) :

7) «Թանդոյեանց» դպրոցներում ամբողջ տարի խաղաղութիւն է թագաւորում: Ինչ կը վերաբերի այնտեղի կարգով — գրել անգամ չիմացող վարժուհուն, ճշմարտ է, մենք ուզել ենք նրան արձակել, բայց օտարված ենք եղել թողնել իր տեղը միայն նրա համար, որ ուրիշ վարժուհի չէ գտնվել:

8) Պարոն Մ. Մ. գրում է իբր Օձնի ուսուցիչը իմ աղգակաւն է. նա այնպէս ինձ աղգական է ինչպէս և պ. Մ. Մ.-ին: Այդ ուսուցիչը իր ուսումը աւարտել է Ներսիսեան ուսումնարանում: Եթէ նա մի (?) սխալ է արել Ախալքալաքում, դա չի նշանակի թէ նրան պէտք է խաչ հանել: Նա Օձնու գիւղում այնպէս իրան վարեց ամբողջ տարվայ ընթացքում, որ ողջ հասարակութիւնը սիրեց նրան, աշակերտների թիւը և հասաւ մինչև 110-ի, այնպէս որ ստիպված եղայ երկու դասատուներ բաժանել և մի տեղական ուսուցչին և նրան օգնական նշանակել: Այդ խեղճ ուսուցիչը ստանում է ամսական 16 ռուբլ և մի քանի պուր ավել տարեկան կառավարիչի պ. Մ. Մ.-ին գտնել ինձ համար մի քանի այդպիսի ուսուցիչներ մեր գիւղերի համար, որտեղ ուսումնարաններ չենք կարողանում բանալ ուսուցիչներ չունենալու պատճառով և մենք պատրաստ ենք այդ ուսուցիչներին ամսական 25 ռ. վճարել, ընտելանալով և վաճառակալանով:

9) Ամենին պ. Մ. Մ.-ի գործը չէ թէ «Իզմիրեան» դպրոցի ուսուցիչը հնազանդվում է կամ չէ հնազանդվում թեմական վերատեսուչի անորոշութեանցը, դա իմ ներքին վարչական գործ է և աւելորդ է անկողններին ուրիշ գործի

*) Ինչպէս տեսնում է ընթերցողը պ. թեմական տեսուչը ստիպվեցաւ և հասարակութեանը հաշիւ տալ:

Խմբ.

մէջ խառնվի *): Ինչ կը վերաբերի այդ ուսուցչի գործունեութեանը և ընդունակութեանը, ես կասեմ, որ նա իմ ունեցած ամենարժեքեղ և փորձված ուսուցիչներից միւն է: — Նրա իբր ուշ ուսումնարան գալը այդ ևս զրպարտութիւն է և մինչև պ. Մ. Մ.-ի գրելը, շատ առաջ, իմ աշակերտին այդ պատմութիւնները հասնում էին, բայց ամենայն տեսակ ընտելութիւններից յետոյ երբեմն առաւօտները անակնունելի կերպով ուսումնարան գնալու ուղիով ժամի 8-ին, այսինքն առաջին դասին, երբեմն երկրորդ և այլն դասերին, ես ամենայն ժամանակ գտել եմ այդ ուսուցչին կանգնած դասատան մէջ պարապելու:

10) Ս. Մ. Մ. մեռնում է, որ ես թեմական վերատեսուչ եմ հարկին չափ ուսումնարանների վրա և ոչ թէ տեսուչ այս կամ այն ուսումնարանի (1): Եթէ այնքան չէ հասկանում, որ ամեն օր բոլոր ուսումնարաններին հետեւի, ինչպէս գրում է Ս. Մ., թեմական վերատեսուչ անկարելի է: Եթէ թեմական վերատեսուչը պէտք է գաւառները, դպրոցները մանդայ և կանոնայ բոլոր ուսումնարանները կարգով այցելել, այն ժամանակ մօտ երկու տարվայ ընթացքում հազիւ թէ նա վերադառնայ թիֆլիս: Եթէ այս հաշիւը չէ հասկանում պ. Մ. Մ., կաշխատեմ պարզել նրան:

Աւելեցել ենք և ունենք իննսուներ չափ ուսումնարաններ թիֆլիսի թեմի մէջ: Այդ ուսումնարանների թիւից նախապէս հանենք 1) Գահնաձա կի տղայոց ուսումնարանը երեք դասատուով, 2) Օրիորդացը երկու դասատու, 3) Ախալքալաքի զարապետեան դպրոցը հինգ դասատու, 4) «Նիւսաբէթեանը» հինգ դասատու, 5) Վարդանես երեք դասատու, 6) «Նոր-Արշալոյս» օր. դպրոցը երկու դասատու, 7) Ախալքալաքի տղայոց ուսումնարանը երեք դասատու, 8) Նոյն տեղի օրիորդացը երկու դասատու, 9) Հաւաքարի Մարիամեան դպրոցը երկու դասատու և այլն, կը մնայ 81 դպրոց մի դասարանով: Գահնաձա ամեն մէկի այցելութեան վրա, կարծում ենք, առ նուազ երկու օր պէտք է գործ գնել, մի օր էլ տնտեսական մասի ընտելութիւնը, ուրեմն երեք օր մի ուսումնարանի վրա: 81 ուսումնարանների համար 81 անգամ 3—243 օր: Սրա վրա պէտք է աւելցանք Գահնաձա կի վերել յիշած ուսումնարանի համար քիչը 12 օր, Ախալքալաքի վերել յիշած բոլոր դպրոցների համար գտնէ մէկ ամիս — 30 օր, Ախալքալաքի դպրոցների առ նուազ 12 օր, Հաւաքարի Մարիամեան ուսումնարանի համար էլ թող լինի չորս օր, բոլորը կանէ 243-ի հետ 301 օր: Բայց դեռ վերջացած չէ: Ճանաչարձորութեան վրա քանի օր գտնէ: Ինձ յանձնած թեմը պարունակում է իր մէջ թիֆլիսի, Քութայիսի ամբողջ նահանգները և Նիւսաբէթօրի (Գանձակի) նահանգի երկու բազմամարդ հազարի գաւառները: Վաղարի և Նիւսաբէթօրի: Այսպէս ուրեմն սկսած ֆոթիից մինչև Գահնաձա մի կողմից, Կովկասեան լեռներից մինչև Գլխիշանի սարերը միւս կողմից կազմում է վրաստանի և իմերեթի թեմը: Այս հազարի տարածութեան վրա սիւսած գիւղերը և քաղաքները պէտք է միայնակ չըլէ թեմական վերատեսուչը: Հաշիւներ ուրեմն ճանապարհը: Փոստով Ախալքալաք (75 վերստ Միխայիլից), Ախալքալաք (60 վերստ), Գահնաձա (190 վ.), Գարաբաղ — Գլխիշան (75 վերստ Աղստաֆից), Սըղանա (100 վ.), Թէլաւ (60 վ.), Զաքարթալա (80 վ. Սղանից), Գուշէթ (30 վ. Սղանից), Ալբուրջի (55 վ.), ընդամենը 725 վերստ մի ուղղութեամբ, իսկ վերադառնալով կանէ 1450 վերստ: Այս տարածութիւնը անցնելու համար փոստով կարծում ենք, որ քիչն 30 օր հարկաւոր լինի, 2 օր էլ երկաթուղով կանէ 32 օր: Սա էլ աւելացնենք 301-ի վրա կը լինի 333 օր: Այնուհետև գալիս է թիւ ճանապարհորդութեանը: ա) Շուշա-վէր և Լոռու վիճակը, բ) Սոմխէթի վիճակը, գ) Ախալքալաքի և Նախկին Կահնաձա վիճակը, դ) Վարդանի և Շաւաղի վիճակը, ե) Գահնաձա վիճակը, զ) Գորտու վիճակը և այլն և այլն, քանի օր հարկաւոր կը լինի մօտ 60—80 գիւղեր ձիով մանդալու համար յաճախ ապառաժ և ամենին յայտնի վտանգաւոր և դժուար ճանապարհներով: Կարծեմ որ մօտ 80 օր այստեղ է հարկաւոր, ուրեմն 333 օրվայ հետ կանէ 413 օր: Սրա վրա գտնեք ամառվայ երկու ամիս արձակուրդը — 60 օր, կանէ 473 օր կամ մէկ ամբողջ տարի և մօտ չորս ամիս: Չը գիտեմ ձեռնվայ ցուրտ և վատ եղանակները ևս հաշեմ թէ ոչ, է՛, այդ

*) Շատ սխալ կարծիք է: Անկողնները եթէ գործի մէջ չը խառնվեն, կոչվածները կարող են անկարգութիւններ անել:

Խմբ.

էլ պ. Մ. Մ.-ին փէշաչ: Այսպէս ուրեմն թէ առանց հանգստանալու և անընդհատ թեմական վերատեսուչը թիֆլիսի թեմի դպրոցները այցելելիս լինի, նա հազիւ կարող լինի վերջացնել բոլոր մի տարի և կէսուս: Բայց որովհետեւ ըստ կանոնադրութեան գտնէ մի անգամ պէտք է այցելել, ուրեմն ամբողջ տարին միայն ճանապարհորդութեամբ պէտք է զրադված լինի վերատեսուչը: Եւ այսուհետեւ նա չը պէտք է հասնի տարէնը մի անգամ ամեն տեղ:

Այս ասածներիցս, կարծեմ, ընթերցողը կարողացաւ հասկանալ թէ ինչու ես, իմ միտարի և կէս թեմական վերատեսուչութեան ժամանակ (1877 թ. յունվարի 22-ին) ընդունեցի պաշտօնս, դեռ չեմ այցելել մի քանի գիւղերի ուսումնարաններ: Այժմս հաւեցե՛ք թէ արդե՞ք ֆիզիկապէս կարելի է բան էր այդ միջոցին չըրջել բոլոր դպրոցները, երբ գտնէ տարվայ կէսը պէտք է թիֆլիսում մնալ, որովհետեւ թեմի բոլոր դպրոցները անդադար գրաւոր հաղորդակ ցութիւններ ունեն թեմական վերատեսուչի հետ հաղորդութիւն մի խնդիրների վերաբերութեամբ և ամենին ինքն պէտք է պատասխանէ, սեն էլ, մաքուրն էլ ինքն գրելով և ամեն տեսակ դիւանական աշխատութիւններ ինքն տանելով: Ինչ կառավարութիւն վըլինէր այդ եթէ ամբողջ տարին չըլէս, իսկ հարկաւոր ժամանակ այս կամ այն ուսումնարանը չը գտնէ թէ ինչ անէ, այս կամ այն խնդրին ինչ վճիռ պէտք է տրվի: Կարծեմ որ բաւականին հասկանալի է պիտ թեմական վերատեսուչի գործելունը թիֆլիսի թեմում, որը չունի իրան գտնէ մի առանձին օգնական անգամ: Բայց թէ ինչ ճար պէտք է արած սրան, ես այստեղ աւելորդ եմ համարում գրել: (Կը շարունակվի)

Թեմ. տեսուչ Թ. Տէր-Յովնանիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԽԱՐԱԳՎԻՑ հաղորդում են՝ որ օգոստոսի 10-ին սկսվեց թուրք գերիների իրանց հայրենիք ուղարկելը, որոնց թիւը մօտաւորապէս հազար հօդէ է: Այնտեղից նրանք երկաթուղով ուղարկվում են ուղղակի Սեւաստօպօլ որտեղ նրանց համար պատրաստված են նաւեր իրանց հայրենիքը տեղափոխելու: Նրանց հետ միաժամանակ ուղարկվում են և Պոլսովայի թուրք գերիները:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Օրերումս այստեղի ուսանողները մասնակցութեամբ օր. Գրիստիէ Կողբեթեանի և Հեղինէ Հայրապետեանի մի ներկայացումն տուին բարեգործական նպատակով: Ներկայացումից ստացվեցաւ 258 ռ. գումար եկամուտ:» Նամակազիրը շնորհակալութիւն է յայտնում պատուելի օրիորդներին, որոնք նախապաշարմունքների և հասարակութեան բաժանաճանքների վրա ուշադրութիւն չը դարձնելով, մասնակցեցին յիշեալ ներկայացմանը:

Մի լուր, որ մեր կովկասեան գինեգործներին գուցէ կը հետաքրքրի, այս օրերս ստացանք Փարիզի աշխարհահանդիսից: Կովկասի և առհասարակ Ռուսաստանի ներկայացրած գինիներից ՄԱԻՐԱՍԱՅԻ գինին (Շամախուց ոչ հեռու գետնով գիւղը) ստացաւ աշխարհահանդիսում ոսկեայ մէդալ: Այդ պատանշանին արժանացած պ. Չվարիկին գործարանիցն է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՒՐԻՒՄ

4. Պօլսից լրագիրներին հեռագրում են հետևեալը:

Սուրբ-Թիւրքաց դաշնադրութիւնը, որ պէտք է որոշէր Բանիայի և Հերցեգովինայի աւստրիական զօրքերով զրաւելու պայմանները և որի մասին այդքան շատ խօսվեցաւ, դեռ ևս ստորագրված չէ: Այդ դաշնադրութիւնը Բ. Դրան միևստրների խորհուրդի վերջին երկու նիստերի ժամանակ նորից ընկնեցաւ:

Բօսնիայում եղած վերջին կռիւներից յետոյ աւստրիական կառավարութիւնը առաջվանից

աւելի է պահանջուած Վախնալով գրգռել Աւստրո-Ունգարիայի հասարակական կարծիքը, կառավարութիւնը յետ առաւ մինչեւ անգամ այն զինուորները, որ նա առաջ խոստացել էր: Գ. Պօլսոմ հետզհետէ արմատանում է այն համոզմունքը, որ Բոսնիայի և Հերցեգովինայի գրաւելու հետեւանքը այն կը լինի, որ այդ երկու նահանգները կը միացնեն Աւստրո-Ունգարիայի հետ: Այս է պատճառը որ այստեղ ոչ ոք չէ հաւատում յիշեալ դաշնադրութեան հաստատութեան, որովհետեւ դա կը փոքրացնէր Աւստրիայի ձեռք բերած ազդեցութիւնները նշանակութիւնը:

Երբէկ Բ. Պօլսոմ հեռագիր ստացաւ իր գեսպան Կարաթէօօրի-փաշայից, որով նա հաղորդում է, թէ երկու կողմերն էլ հասան համաձայնութեան, որ դաշնագիրը պատրաստ է և սպասում են կոմս Անդրաշի Վիեննա վերադառնալուն: Դաշնագիրը ստորագրուելու համար: Աւստրիական առաջին մինիստրի բացակայութեանը այսպիսի րօպէում մեծ նշանակութիւն են տալիս:

Օգոստոսի 9-ին Գ. Պօլսոմ դուրս գնաց մուշեր Մէհմէդ-Ալի-փաշան: Առաջ նա կուղևորվեց Յանինա, որտեղ կը տեսնվեց ալբանացի ապստամբների առաջնորդների հետ և յետոյ կերթայ Սերբիայի և Զէրնօօրիայի սահմանակից այն երկրները, որոնք Քերլենի դաշնագրի համաձայն պէտք է միանան այդ երկու իշխանութիւնների հետ: Ասում են, որ մուշերի ճանապարհորդութեան նպատակն է հանգստացնել այդ երկրների մահմետական ազգաբնակիչները և հեշտացնել դրանց միացնելու գործը:

Վերադառնալուց առաջ Մէհմէդ-Ալի-փաշայից երեք Բէնէ-փաշային և մեծ վեզիր Սալի-Ֆէտ-փաշային: Պատմելով այս վերջինին իր մի քանի օր առաջ ունեցած խօսակցութիւնը ռուսաց դեսպան իշխան Լօբանով-Ռոստովցու հետ, Մէհմէդ-Ալի-փաշան ասել է, որ նա առաջարկեց ռուսաց դեսպանին «խորհուրդ տալ ռուսաց կառավարութեան հանդիստ լինելը, եթէ ոչ նա Քերլենի հետ գործ կուենայ»: Մեծ վեզիրը ծաղրել է այս ինքնազօրութիւնը և յիշեցրել է մուշերին, որ նրա յանձնարարութիւնը խաղաղացող է և որ այժմ շատ անյարմար է Ռուսաստանի դէմ սպառնալիքներ անել:

Այս տեղեկութիւնները մուշերի յանձնարարութեան մասին քաղված են պաշտօնական աղբիւրներից, մնում է իմանալ արդեօք Մէհմէդ-Ալի-փաշան չէ՞ ստացել դրանց հակառակ գաղտնի հրահանգները:

Բ. Պօլսոմ սպասում է, որ օրերումս Անգլիան կառաջարկէ իր միջամտութիւնը Յուդանաստանի գործերի վերաբերութեամբ: Օսմանեան կառավարութիւնը մտադիր է մերժել այդ միջամտութիւնը և մեծ պետութիւնների դեսպաններից մի ժողով հրաւիրել յունաց հարցը քննելու համար: Մինչև այս գործի կատարելը Քերլենի իր զօրքերը մեծ քանակութեամբ կենտրոնացնում է Ալբանիայի սահմանների վրա:

Օրերումս հասաւ Գ. Պօլսոմ Լազետանի անուանի բնակիչների պատգամաւորութիւն և խնդրեց Բ. Պրանից Հայաստանի մէջ, Մալաթիայի շրջակայքում, Սիվասի և Դիարբէքի մէջ գտնված երկրները տալ լազերի բնակիչներին համար, ի նկատի ունենալ Բաթալի և նրա շրջակայքի Ռուսաստանի ձեռք անցնելը: Լազերը դիտարկութիւն ունեն իրանց բնտանիքներով գաղթել այդ երկրները: Այս առաջարկութիւնը այնպիսի փոթորիկ և ընդդիմադրութիւն ծագեցրեց այստեղի հայ-թուրք մէջ, որ մեծ վեզիրը շատ դժուար դրութեան մէջ է և մինչև այժմ ոչինչ որոշ վճիռ չէ տուել այդ հարցին: Լազերի այս առաջարկութիւնից երեւում է, որ նոքա այլևս դիտարկութիւն չունեն ընդդիմանալ Բաթալի Ռուսաստանի տիրապետութեանը ենթարկվելու:

Լուսն Անգլիական դեսպան պ. Լայպրոք ընդունեց Լազետանի պատգամաւորներին նրանց ժամանելու միւս օրը: Նոքա ներկայացան մեծ վեզիրին պ. Լայպրոքի խորհուրդը ստանալուց յետոյ: Շատ կարելի է, որ Բ. Պօլսոմ օգուտ կը քաղէ այդ պատգամաւորութիւնից և Բաթալի Ռուսաստանին յանձնելու դարձեալ կը յետաձգէ:

Միջազգային մասնագիտութիւն, որ նշանակած էր Բօգօպեան ապստամբութեան պատճառները քննելու համար, օրերումս ներկայացրեց իր վեկուցումն: Մասնագիտութիւնը անցքերին այնպիսի մեծ նշանակութիւն է տուել, որ ռուսաց ներկայացուցիչը չը համաձայնեց ստորագրել վեկուցումն, իսկ Գերմանիայի ներկայացուցիչը ստորագրեց միայն այն ժամանակ, երբ նրանից հանեցին մի քանի տեղեր, որոնք չափից դուրս մեղանշում էին ճշմարտութեան դէմ: Զեկուցումը ռուսներին ցոյց է տալիս բօլշակների գործած խնկարգութիւններին մասնակից: Բօլշակները այդ առիթով իշխան Պօնդուկով-Վորսակովին մի հանրագիր ներկայացրին, որի մէջ ասված է թէ բօլշակները երբեք չեն հպատակվի Քերլենի դաշնագրին, որ նրանց հայրենիքը բաժանեց և մի բաժինը թողեց թիրաքաց անտանելու լուծի տակ:

Օգոստոսի 8-ին իշխան Պօնդուկով-Վորսակով Ֆիլիպպօպօլեց ուղևորվեց Գ. Պօլսոմ իշխան Լօբանով-Ռոստովցու հետ խորհրդակցելու համար միջազգային մասնագիտութիւնը վեկուցման մասին:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻԱՅԻՑ

Երբորում, 27 յուլիսի

Հայկական հարցը գտնվում է մի խախտու ներկայի մէջ. նրան սպառնում է գաղթականութիւնը, եթէ չը տապալվեց նա այդ անդունդը, եթէ չը կլանեց նրան չարաշէպ վիճակը: Նա անշուշտ ունի իր սիրուն ապագան: Այդ տեսչալի ապագայում, այդ բազմակարծ տաճարակում, էրզրումը անշուշտ պիտի խաղայ մի նշանաւոր դեր—այդ խոստանում է նրա կենտրոնական գետնաւորը, նրա միջի, մօտիկ ու հեռու շրջակայքների մեծամիկ հայ բնակիչները, գետնի բերրիութիւնը, ժողովրդի արագ աճիլը և ամրութիւնը, բնութեան ու օդի պայծառութիւնը և տեղերի, սարերի ու գետերի հետ կապված աղբի սրբազան տաճարութիւնները: Բայց ունենալով քաղաքի բոլոր նիւթական ոյժը իր ձեռքին, և կազմելով ընդհանուր բնակչութեան մի նշանաւոր մասը, ինչո՞ւ էրզրումի հայ հասարակութիւնը մնացել է մինչև այժմ անապօք, առանց կապի, կենսի, եռանդի ու աշխուժի արտայայտութեան, երբ վառայ ծովի ափերում երևում է միշտ արի գործունէութիւն, վառվռուն հոգի, սերտ միութիւն և վստահ ընթացք: Գլխաւոր պատճառները երկու են. անցեալ պատերազմի գաղթականութիւնը և կրօնական բաժանումը: Համարեա չը կայ էրզրումում մի անուանի տուն, մի հարուստ օջախ, մի նշանաւոր գերդաստան, որ մնացած լինի Պասկևիչի ժամանակներից առաջ, բոլորը էրզրումից տեղափոխվել են անցեալ պատերազմով ռուսաց սահմանը և նրանց փոխարինել են նորեկներ Գիարբէքի, Խարբէքի, Արապկերտի, Բիթլիսի, Մշից, Վանից և ուրիշ տեղերից. այսպէս ձևացնելով զատ զատ խմբեր, քիչ թէ շատ միմեանցից զանազանվող բարբառով, սովորութիւններով, բնաւորութեամբ և առանձնապատկութիւններով, մինչև այժմ մնացել են դէպի միմասնաց սառը, առանց ներքին կապի ու սերտ յարաբերութեանց: Առաջին անգամից այսպէս մի երևոյթ կարող է օտարութիւն, բայց այդ իսկ իրողութիւն է. փոխադարձ անգիտակցութիւն և երբեմն արհամարհանք տեղի է ունենում ոչ միայն բաւական հեռաւոր տեղերի բնակիչներին, այլ, այլ ևս մօտաւոր գիւղերի, մասնաւոր երբ նրանց մէջ չը կայ ընդհանուր շահերի, վսեմ ձգտումների ձանաչողութիւն և միութիւն: Իսկ ինչ կը վերաբերի կրօնական տարբերութեան և նրա զեղծող ազդեցութեան դրա մասին արդէն աւելորդ է խօսել: Ահա ինչու մինչև այժմ տեղի է ունեցել էրզրումիցների մէջ ազգային անտար-

բերութիւն, հասարակական թմրութիւն և պատկերացման Բայց չը նայելով այս ձախողակ պայմաններին, էրզրումից մնացել են միշտ հայ, այսինքն, արիւնք, մարդավայել կենսից սիրող և ուսումնասէր: Վաղուց արդէն էրզրումից ունեն իրանց ուսումնարանները, որտեղ կարգացողների թիւը կը բնականաբար աճէ: Երբ Լուսաւորչական հայերը, որոնց թիւը հասնում է 2500 տան, ունեն 5 վարժարան. 1) աղայոց գլխաւոր դպրոց, որ ասվում է «Արծրունեան», սա ունէ 5 դասատուն, 500—600 աշակերտներ և 7 ուսուցիչ: 2) Օրիորդաց ծխական վարժարան, 3) երկու թաղական երկսեռ դպրոցներ: 4) Ընկերական դպրոց, որ ունէ 8 դասատուն: Այս բոլորի եկամուտները, բացի ընկերական դպրոցի, ստացվում է եկեղեցական կալուածներից և հասնում է տարեկան 8 հազար ռուբլու: Իսկ ընկերական դպրոցի խնամքը և պահպանողութիւնը գրանվում է մի առանձին ընկերութեան վրա: Կաթօլիկ հայերը, որ հարիւր տանից աւելի չեն, ունեն մի աղայոց և և մի օրիորդաց ուսումնարան: Մանկավարժական գործը մեր կաթօլիկ եղբայրների մօտ արժանի է ամեն բարի նախաձի և քովաստութեան, այնչափ կատարեալ է նա ամեն կողմով: Բողոքական հայերը 20 տունից աւելի չեն, բայց նրանք ևս ունեն իրանց երկսեռ ուսումնարանը, որ գտնվում է միւսար և տիկին Գօլի հսկողութեան տակ: Ահա արանք են ձևացնում էրզրումի երիտասարդութեան մըտաւոր և բարոյական զարգացման շտեմարանը: Վերջին զարգացման անցքը և հայկական խնդրի առաջ խաղալը, պէտք է խոստովանվի, որ էրզրումիցների տուեց մի մեծ բարոյական զարկ: Նայել կրօնի առաջնակարգ կարեւորութիւնը և միաւորեց կցկտուր խմբեր և ընկերութիւններ, դրդեց ու վառեց բոլորի ազգային եռանդը ու հոգին և վերջապէս նոր ձեռնարկութիւնների հետ միատեղ ծնուեց մի նոր կրթողական տարր—թատրօնական բեմ, որ առաջի անգամ է երևում դեռ էրզրումի մէջ: Բացի այս խորում են այժմ ժողովրդական դասախօսութիւններ, զարգացաներ և լսարաններ հիմնելով վրա: Թող լինի Տիրօշ աշակցութիւնը ամեն ազգային գործին...

Գրիգոր Նիկողոսեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական կայսրի որսորդութեան քաջութիւնները, Գերմանական մի լրագիր, որ հրատարակվում էր 1819 թվականին՝ պատմում է, որ կայսրը երբ դեռ կոչվում էր արքայորդի Վիլհելմ պրուսաց, սկսեց որսորդութիւնը 22 տարեկան հասակում: Նա ունէր որսորդութեան օրագիր՝ որտեղ գրում էր ճշգրտութեամբ ամեն մի իր սեփական ձեռքով սպանած որսի գլուխը: Այս ցուցակը սկսվում է վայրենի եզով (зубры) որ սպանած է 1819 թվին իշխան Պէտի կալուածներում որսորդութեան ժամանակ: Զետոյ գրված են երկու արջ, երեք գայլ, 779 մեծ և 629 փոքր վայրի խոզ, 11 վայրի այծ, 230 եղան տեսակ (лось) կենդանի, 279 հիւսիսային եղջերու և 145 արու այծեամն (серна): Մարդ որս նորին կայսրերական մեծութիւնը սպանել է 2908 նապաստակ, 33 ճագար (кролик), 39 աղուէս, 11 գորշուկ (барсук), 910 փառիան (фазан) և 162 կաքաւ: Ընդամենը գերմանական կայսրի ձեռքով սպանված որսի քանակութիւնը՝ սկսեալ 1819 թվից մինչև 1877 թվի վերջը՝ հաւասարվում է 6996 կամ մօտաւորապէս 7000-ի, ուրեմն ամեն տարի միջին թվով սպանում էր 120 գլուխ կենդանի:

Թղթից չինացի տուն: Բերլինում նշանակած թղթի ձեռագործների հանդիսին ի թիւս այլոց հանդիսացած է և մի թղթից չինացի տուն ամերիկական ձեռով: Պատերը և կտուրը չինացի են ստուարաթղթից: Տախտակամածի վրա փռած են գորգեր (թղթէ), իսկ պատերի վրա կայքած են թղթի պատառներ (обои), առաստաղի վրա թղթի զարդարանքներ, Պատուհանները զարդարած են թղթի վարդադրոշմներով: Թղթի վրա տպագրված պատկերներով թղթերի զանգուածից (macca) չինացի շրջանակներում: Նոյն զանգուածից չինացի են և տան կարասիքը (ме-

Հռոմում օրերումս նշանակած էր բեկիս-ցիները նամակաբեր աղանիւնների մրցութիւնը: Երբ համար նշանակած էր պրիզ 2000 ֆրանկի Առաւօտեան ժամի 8-ին երկաթուղու կայարանի մօտ եղած հրապարակի վրա ժողովվեցաւ մեծ բազմութիւն: Մշակների խումբը բերեց 45 դամբիւղ, որոնց ամեն մէկի մէջ նստած էին աղանիւններ: Տիկիները մեծ հետաքրքրութեամբ նայում էին լօրէնտով այս ճգնաւոր թռչունների վրա: Աղանիւնները բաւական մեծ մեծ էին և գոյն-զգոյն: Իւրաքանչիւր աղանիւն ունէր իր թևերի վրա նշան, մակագիր «Sport colomphile» և 2 № №, մինը բեկիսցիների և միւսը հռոմայեցիների: Կային տուփեր հինգ կարգ դարաւած, Օֆիցներներից մէկը մանրամասնաբար բացատրեց մշակներին, թէ ինչ կերպով պէտք է թողնել աղանիւնները: Ամեն մի մշակ պարտաւոր էր կանգնել երկու տուփերի մէջ տեղը և վերցնել երկու կողմից տուփերի խուփերը: Պ. Բրիւնի տուած նշանով մշակները պէտք է յանկարծ բաց անեն զամբիւղները: Ուղիղ ժամի 5 1/2-ին տուած էր նշանը: Տուփերը բաց արին և թևաւոր ճգնաւորները արագապէս թռան այնտեղից բոլոր բազմութեամբ և թռչելով մի քանի տարածութիւն միասին, նրանք բաժանվեցան երկու խումբերի վրա, մէկ խումբը թռաւ «Nationale» անուանեալ փողոցով, իսկ միւսը ուրիշ ուղղութեամբ: Աղանիւնների խումբերը թռչում էին մի քանի ժամանակ զուգահեռապէս (паралельно), բայց յետոյ կտմաց կամաց սկսեցին մօտենալ միմեանց, միացան և մի քանի րօպէից յետոյ անհետացան աչքից: Աղանիւնները թռան դէպի հիւսիս և հիւսիս-արեւելեան կողմը, Այս թևաւոր ճանապարհորդները պէտք է թռչել 1500 վերստ 2 կամ շատ 2 1/2 օրվայ միջոցում: Գիշերները նրանք կը հանգստանան և կուտեն: Ի հարկէ նրանցից բոլորը չեն հասնի նշանակած տեղը: Շատերը հասնում են, իսկ մի քանիսները զոհ են լինում արծիւներին սարերի մօտ թռչելով: Դիտողութեամբ քննված է որ 800 վերստ տարածութեան վրա աղանիւնների խումբից, առաւարակ, հարիւրից կորչում է 5 հազար միայն: Այս անգամ հեռաւորութիւնը երկու անգամ աւելի երկայն էր: Մասնագէտները (специалисты) ասում են, որ այսպիսի մի մեծ տարածութիւն առաջին անգամ են ստիպում թռչել նամակաբեր աղանիւններին:

Համախմբարային հանդէսները եղան այս կարգով. 1851 թվին Լօնդոնում, 1855 Փարիզում, 1862 Լօնդոնում, 1867 Փարիզում, 1873 Վիեննայում, 1876 Ֆրանկֆրայում և 1878 Փարիզում: Այժմեան հանդէսը օրական միջին թվով մօտ 70,000 հոգի են յաճախում:

Միլանի «Secelo» լրագրին Հռոմից հեռագրում են օգոստոսի 17-ին, որ իգական համալսարանի փոխանակ, որի հիմնելու մասին վերջին ժամանակներս սկսեցին խօսել լրագիրները, Հռոմում և Ֆլորենցիայում իգական բարձր դաստեաններ են հիմնվում:

Փարիզի աշխարհային դիսկարմարմոթ այցելուները: Փարիզի աշխարհային դիսկ վրա մեծ տպաւորութիւն գործեց հինգ կարմարմոթ հնդկացիների երևալը: Սրանք բարձրահասակ մարդիկ են, ասում է «Francaise» լրագիրը, երեսի ուղիղ զմագրութիւններով: և հագնված են իրանց երկրում գործածվող մօդայով, այսինքն շատ թեթև կերպով: Նոցա գլխերը զարդարված են զանազանադրոյն փետուրներով, իսկ դէմքը և կուրծքը նկարված են: Մի քանիսները ապակեայ զարդարանքներ ունէին: Նրանց հետ որպէս թարգման չըլում էր մէկ ամերիկացի օֆիցէր:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Վիեննա, 22 օգոստոսի (3 սեպտեմբերի): Աւստրիական զօրքերը օգոստոսի 21-ին առանց կուռի գրաւեցին Գրինս: Թիրաքաց տեղական զօրքերից 150 մարդ Տրեբլինիէի ճանապարհով ուղարկված են Բագուզա:

